տեղ՝ ուր յարգ եղել է, այսինքն Վաղարշապատի Կաթուղիկէ Մայր Եկեղեցում։ Այդպէս սկսուել է Սուրբ Գրիգոր Լուսաւորչից, այդպէս և պէտք է շարունակուի։

## ՀԱՇԻՒ ԲՈՆԱԿՈԹ ԳԻՒՂԻ ԴՊՐՈՑԻ.

Սիւնեաց վիճակի Բոնակոթ գիւղի Հոգևոր ծխական դպրոցի Հոգաբարձութիւնը ուղարկելով Դպրոցի տնտեսական հաշիւը՝ յայտնում է որ Հոգաբարձութիւնը բաղկացած է տասն և չորս անձինքներից, որ 1878 թուից ցայսօր ստանձնելով Դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնը՝ իւր կարողութեան չափ աշխատել է արդիւնաւոր անել։ Սկզբում օգնող չէ ունեցել, բայց անցեալ տարի օգնել են մի քանի գիւղերի Հայ հասարակութիւնք նուիրաբերելով իրանց երկրի ընդեղէններից։ Նուիրատուաց անունները թէև ուղարկուած է ի հրատարակութիւն՝ բայց թերթի անձկութեան պատճառով չենք կարող կատարել Հոգաբարձութեան ցանկութիւնը։

1883 թուին դրամական օժանդակութիւն եղել է. Քարահունջից՝ 1 րուբլի. Տոլորսից 2 րուբ. Գեօրիսից՝ 12 րուբ. 40 կոպ., Շաղաթից 16 րուբ. 80 կոպ., Շնաթաղից՝ 2 րուբ., Բալակից 2 րուբ. 25 կոպ., Շուշիից՝ 2 րուբ 10 կոպ, Բոնակոթից՝ 9 րուբ. 40 կոպ., Ալխաթիանից 2 ր. 75 կոպ., Ուզ գիւղից՝ 2. րուբ., Ջէյվայից՝ 2 րուբ., Լորից 1 րուբ. 50 կոպ., Աղքեանդից՝ 1 րուբ., Ղարաքիլիսայից՝ 1 րուբ., Անգեղակոթից՝ 1 րուբ., Խընձորեսկից՝ 3 րուբ., չորս պարոնայք և դպրոցի ուսուցիչ 8 րուբլի։ Գումարն է 70 ր. 20 կ.

| 1883 թուին ցորենոյ օժանդակութիւն է եղել, | Սոմ. | Չան. |
|---|---|---|
| Բոնակոթից . . . . . . . . | 175 | 3 |
| Աղքեանդից . . . . . . . . | 8 | 3 |
| Ուզ՛ց . . . . . . . . | 15 | |
| Գումարն է | 199 | |

| ՄՈՒՏՔ. | Ր. | Կ. | Սոմար | Չանակ |
|---|---|---|---|---|
| Հոգաբարձութեան շահեցրած ընդհանուր դրամոց և ցորենոյ գումարը 1878 ամի Յունվարի 1 ից ց1ն Սեպտեմ. 1883 ամի. | | | | |
| Ի 1ն Օգոստ. 1882 ամի ց1ն Յունվարի 1883 ամի. ի նուիրատու անձանց. . . . . . | 845 | 75 | 492 | 4 |
| Ցորենի և դրամի գումարը նուիրած զանազան մարդկանցից որք տպուած են Արարատի անցեալ համարի մէջ. | 26 | 85 | 38 | 3 |
| Ի 10ն Մարտի 1883 ամի ց1ն Դեկտեմ. նուիրատուների ցուցակով. . . . . . | 67 | 20 | 198 | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշակերտաց թոշակագրամ ի 1ն Սեպտ. 1882 ամի ց1ն Յուլիսի 1883 ամի. . . . . . | 76 | 65 | 729 | 5 |
| Գումար. | 1016 | 35 | | |
| 729 5/6 սոմարից 522 սոմար 5 չանաղ վաճառուած. | 520 | 71 | | |
| Ընդհանուր գումարն է. | 1537 | 16 | 207 | |
| **ԾԱԽՔ.** | | | | |
| Զանազան ծախք ի պէտս դպրոցի ի 1էն Սեպտ. 1878 ամի ց1ն Յունվարի 1883 ամի. . . . . | 30 | 15 | | |
| Ծախք ծխական հոգևոր դպրոցի շինութեան (որ բաղկացած է մի դահլիճից, մի առանձնասենեակից և մի սենեակից քար և կրով) ի 1էն Մարտի ց1ն Դեկտ 1883 ամի. . . . . . . . | 1091 | 76 | | |
| Ի 1-ն Սեպ. 1882 ամի ց 1-ն Յուլիսի 1883 ամի Ուսուցչի ռոճիկ. . . . . . | 200 | | | |
| Ծախքի գումարն է. | 1321 | 91 | | |
| Ծախքը մուտքից հանելով մնումէ մայր գումար առ 1-ն Դեկ. 1883 ամի. . . . . | 215 | 25 | 207 | |
| **Ապառիկ ժողոված.** | | | | |
| Յովհաննէս վարդապետ Ղալամեանցի վերայ, որ ստորագրած է ժապաւինեալ տոմարում անցեալ տարի. | 50 | | | |
| Զանազան անձանց վերայ ըստ հաշուոյ ժապաւինեալ տոմարի մնումէ դրամ և ցորեան. . . | 5 | 10 | 66 | 4 |
| Պատրաստի և ապառ. արդեանց ընդհանուր գումարն է. | 270 | 35 | 273 | 4 |

Անդամք հոգաբարձուաց:
Միրզաջան Տէր Գէորգեան
Խաչատուր Յովակիմեանց
Կեանջիմ Ամիրխանեանց
Խաչատուր Մահտսի Աղայեանց